ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

« 16 » 02 2024 թ.

(ստորագրություն)

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգը սահմանում է Քոլեջի մանկավարժական խորհրդի իրավասությունները և գործառույթները:

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

2.1 Մանկավարժական խորհրդի աշխատանքը կազմակերպում և ղեկավարում է Քոլեջի տնօրենը, ով ի պաշտոնե մանկավարժական խորհրդի նախագահն է:

2.2 Մանկավարժական խորհուրդը Քոլեջում իրականացնում է տարված ուսումնական աշխատանքների կատարողականի քննարկումը, վերլուծումը, բացթողումների վերհանումը, որը նպաստում է ուսումնական աշխատանքների բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը:

2.3 Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենի տեղակալները, ամբիոնի վարիչները, կուրսղեկները, լաբորանտները, վարպետները և դասախոսները: Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով, տարվա ընթացքում 2-3 անգամ և ըստ անհրաժեշտության:

3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1 Մանկավարժական խորհուրդը քննարկում է

- Քոլեջի տնօրենի զարգացման ծրագիրը, որի հիման վրա կազմվում է Քոլեջի ռազմավարական ծրագիրը,
- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտալսարանային և արտաքոլեջային աշխատանքների կազմակերպման հարցերը,
- ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր (ֆինանսական, կազմակերպչական),
- Քոլեջի աշխատանքային ռեժիմի, ուսումնական գործընթացի ժամանակացույցի, աշխատողին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ հարցերը և առաջարկություններ ներկայացնում հաստատության կառավարման մարմիններին:

3.2 Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունում

- սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու մասին,
- անհարգելի բացակայությունների, ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու մասին,
- գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին խրախուսելու մասին: